Կաղնուտ

Բնակչություն՝ 109

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 23 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1540 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Պատմական աղբյուրներում հիշատակվում է Մողես, Մուկես, Նավրուզլու ձևերով: Հնում կոչվում էր Մողես և մտնում էր Սյունիքի Աճանան գավառի մեջ: Կաղնուտ է վերանվանվել 1949թ. ապրիլի 29-ին:
Կաղնուտում 1830թ. բնակություն են հաստատել Իրանի Ղարադաղ գավառից տեղափոխված մեծ թվով հայեր:
Գյուղի շրջակայքում պահպանվել են միջնադարյան եկեղեցի (Անապատ), դամբարանադաշտ, գերեզմանոցներ և հին բնակավայրի հետքեր, որին տեղացիների կոչում են Հոնապատ:
Կաղնուտը Սյունիքի մարզի գեղատեսիլ բնակավայրերից է:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1154 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 327 հա, որից՝
- վարելահող՝ 141 հա, բազմամյա տնկարկ՝ 3հա, խոտհարք՝ 4 հա, արոտ՝ 85 հա, այլ հողատեսք՝95հա
- բնակավայրերի հողեր՝ 34հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 4 հա,
- անտառային հողեր՝ 780 հա, որից անտառածածկ՝ 728 հա
- ջրային հողեր՝ 2 հա